*ՀՀ, ք. Երևան*

*17.04.2025թ.*

**ՈՐՈՇՈՒՄ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ԱՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ**

***ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Հիմք ընդունելով հետևյալ փաստերը.

- «ՀԱԱԳ-ԳՀԱՊՁԲ-25/13» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասանակից է ճանաչվել «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ն և Պատվիրատուն 07.04.2025թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:
- «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հնգօրյա ժամկետում չի ներկայացրել իր կողմից կնքված պայմանագիրը և նույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

և

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
2. «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
3. Ստորև ներկայացվում են «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ի տվյալները՝ համաձայն սահմանված ձևաչափի:

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ | 02910767 | Հասցե՝ ք.Երևան,Դավթաշեն 1թղ.27/12 Հեռ՝ +374 77 286227 Էլ փոստ՝ tadevos89@bk.ru ՀՎՀՀ՝ 00226052 | v | | | ՀԱԱԳ-ԳՀԱՊՁԲ-25/13 |

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Գործադիր տնօրեն** **Արտակ Միրզոյան**

**Տնօրինության նախագահ**